




**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE



# ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ



## ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (PACA)



**ԾՈՎԱԳՅՈՒՂ ԵՎ ՍԵՄՅՈՆՈՎԿԱ  
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ**

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ, 2014**

*Այս հետազոտությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության /ԱՄՆ ՄԶԳ/ միջոցով: Հետազոտության բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և պարտադիր չէ որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:*

---

## Բովանդակություն

---

Վերլուծություն իրականացնող կառույց .....	3
Համայնքներ .....	4
Համայնքների վերաբերյալ տեղեկություններ .....	4
Դիտարկվող գյուղերի մրցակցային առավելությունները .....	5
Համայնքների խմբի տնտեսության նկարագիրը.....	6
Ա. Հողագործություն.....	6
Նախաձեռնություններ հողագործության ոլորտում .....	9
Բ. Ծովամթերքի ճանապարհամերձ առևտուր.....	10
Գ. Ռեստորանային բիզնես և տուրիզմ.....	13
Նախաձեռնություններ.....	13
Դ. Անասնապահություն .....	14
Կաթի իրացում .....	16
Նախաձեռնություններ անասնապահության արժեշղթայում .....	18
Կանանց ներգրավվածությունը արժեշղթաներում .....	20

Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատ



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԱՌԵՎՏՐԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ  
GEGHARKUNIK CHAMBER OF COMMERCE AND INDUSTRY

*Համայնքներում տեղական տնտեսական զարգացման գործընթացն սկսվեց 2014 թ-ի օգոստոս ամսին ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսավորմամբ համատեղ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (PRP) ծրագրի շրջանակում: Բացահայտվեցին համայնքների հիմնական մրցակցային առավելությունները և ախտորոշվեցին տնտեսության առաջատար ճյուղերը, որոնց հիման վրա առաջարկվեցին տնտեսության զարգացման համար արմատական նշանակություն ունեցող նախաձեռնություններ:*

Գործընթացն իր մեջ ներառեց հետևյալ փուլերը.

- ⇒ գործընթացի ընդհանուր ներկայացում, ծանոթություն, տեղական թիմի ձևավորում,
- ⇒ համայնքների տնտեսական քարտեզագրում-առաջատար ճյուղերի առանձնացում, ճյուղերում առաջատար դերակատարների բացահայտում,
- ⇒ առկա արժեքի շղթաների վերլուծություն, բարեփոխման նախաձեռնությունների բացահայտում,
- ⇒ աշխատանքային հանդիպումներ՝ առաջատար ճյուղերի վերլուծության համար,
- ⇒ արդյունքների ամփոփում, նախաձեռնությունների ստացում,
- ⇒ նախաձեռնությունների վերջնականացում, գրքույկի մշակում,
- ⇒ համայնքների ակտիվ դերակատարներին ստացված արդյունքների, նախաձեռնությունների ներկայացում:

---

## Համայնքներ

---

Սևանի ավազանում՝ իրար հարևանությամբ գտնվող այս երկու համայնքների տարեց բնակիչները երազանքով ու կարոտով են հիշում այն ժամանակները, երբ գյուղերում զարգացած էր գյուղատնտեսությունը: Մարդիկ ապրում էին, աշխատում և արարում՝ ստեղծելով ոչ միայն գյուղատնտեսական արտադրանք, այլ նաև վերամշակում՝ հարևան համայնքներին ապահովելով կաթնամթերքով, թարմ հացով և գյուղմթերքներով...

Երիտասարդները չեն հիշում այդ տարիները: Չնայած մեծաքանակ դժվարություններին՝ նրանք ջանասիրաբար ու եռանդով կերտում են իրենց ներկան՝ գյուղերում ստեղծելով բարեկեցիկ կյանքի համար պայմաններ և, ամենակարևորն է, այն գերադասում են օտար երկրներում բախտի որոնման ճանապարհից:

Համայնքների բնակիչները իրենց ծրագրերը և գյուղերի զարգացումը կապում են հողագործության և անասնապահության զարգացման, գյուղմթերքների վերամշակման, Սևանա լճի ավիամերձ հատվածի հյուրանոցային և ռեստորանային բիզնեսի զարգացման ու ձկնաբուծության հետ:

Նրանք դանդաղ, բայց հաստատուն քայլերով առաջ են շարժվում՝ իրենց սեփական ուժի հանդեպ հավատով լցված: Տարեցտարի ավելանում են մշակվող հողատարածքները, ավելանում է անասնազիլաքանակը, ռեստորանային բիզնեսները աճում են՝ փոքր կառույցներից վերածվելով կայացած բիզնեսների, որոնց հյուրընկալությունն ու որակյալ սննդի համբավը տարածվում է Հայաստանի գրեթե բոլոր մարզերում:

---

## Համայնքների վերաբերյալ տեղեկություններ

---

	Ծովագյուղ	Մեմոնովկա
Բնակչություն	4300	297
Տնային տնտեսություններ	1126	67
Վարելահող	1028.15	289
որից՝ ջրովի	-	-
Ցանվող կուլտուրաներ (հա)	660 հա	-
Խոշոր եղջերավոր անասուններ	3510	717
որից՝ կով	1428	279
Մանր եղջերավորներ	1410	348
Կոմբայններ	1	-
Տրակտորներ	13	11
Բեռնատարներ	17	11

---

## Դիտարկվող գյուղերի մրցակցային առավելությունները

---

Ստորև ներկայացված են համայնքների մրցակցային առավելությունները:

- Բնակլիմայական պայմանները նպաստավոր են հողագործության և անասնապահության զարգացման համար:
- Անասնապահության զարգացման համար առավելություն է հեռագնա արոտների և խոտհարքերի առկայությունը, որոնք մասամբ ապահովված են ջրով և էլեկտրաէներգիայով:
- Համայնքների հարևանությամբ է անցնում Երևան-Դիլիջան-Թբիլիսի միջպետական մայրուղին, որը հնարավորություն է ստեղծում վաճառելու արտադրված մթերքները:
- Սևանա լճի հյուսիսային մասի ափամերձ հատվածին մոտ գտնվելը, ինչպես նաև այդ հատվածով անցնող Երևան-Դիլիջան-Թբիլիսի միջպետական մայրուղին, հանգստի և ռեստորանային բիզնեսի զարգացման համար պայմաններ են ստեղծում:
- Մեծ է արևային օրերի քանակը: Արևոտ ժամերի թիվը ամենաբարձրերից է ՀՀ-ում (2678 ժամ, հանրապետության միջինը՝ 2400 ժամ):

---

## Համայնքների խմբի տնտեսության նկարագիրը

---

### Ա. Հողագործություն

Ամեն տունն փոքր տնամերձ հողակտոր ուներ: Այնքան փոքր ու այնքան արժեքավոր, որ շատ մշակելուց հողը փոշի էր դարձել: Այս հողով ապրում էին, տալիս ամենալավ ու ընտիր սերմը, ստանում բերքն ու գոհանում: Հետո ամեն մեկը գյուղամիջում պարծենում էր իր ստացած բերքով:

Դաշտերը համայնական էին: Գյուղացին աշխատում էր կոլխոզում, բայց ուշքն ու միտք իր տունն էր, իր մի փոքր հողակտորը և դրանից ստացվող բերքը: Կոլխոզից գողանում էր: Ուրիշ էր, ուրիշինն էր: Ու իր սեփական հողակտորի արժեքն ավելի էր աճում:

Քանդվեց կոլխոզը, կարգերը փոխվեցին: Հսկա դաշտերը բաժանեցին մանր- մանր կտորների ու տվեցին գյուղացուն: Բոլորին՝ հավասար: Հողը կրկին դարձավ գյուղացու սեփականությունը: Մի քանի տարի հողից փոշի էր ելնում ամենուր, գյուղացին մշակում էր իր սեփական հողը: Հավաքվում էին հարազատներով. մեկը տրակտոր ուներ, մյուսը՝ երկու ժիր տղա... ու միասին մշակում էին: Գյուղացին մշակ էր դառնում: Հարևան քաղաքներում մեծ գործարաններն էլ չէին աշխատում:

Այսպիսով, գյուղացու գործը դարձավ իր հողը մշակելը, իր անասունը պահելը: Անգամ գյուղից ելած մարդիկ, ովքեր վաղուց քաղաքում էին ապրում, սկսեցին վերադառնալ գյուղ, ամրանալ հողին ու սնվել դրանից:

Ծովագյուղի հիմնական մշակաբույսը ցորենն էր: Հարյուրավոր հեկտարների վրա մարդիկ ցորեն էին մշակում, հետո այլուր ստանում ու թխում հացն հանապազօրյա:

Հետո՝ պատերազմ, շրջափակում, տնտեսական ճգնաժամ: Թանկացան և՛ վառելանյութը, և՛ ծառայությունները, պարարտանյութ ընդհանրապես չկար: Հայաստանը սկսեց ավելի ու ավելի շատ ցորեն ներկրել, որն ավելի էժան էր ու որակյալ: Գյուղացին միշտ նույն սերմացուն էր օգտագործում, բերքատվությունը կրճատվում էր: Փոքր հողակտորների վրա ցորեն մշակող ծովագյուղցին չէր կարող ո՛չ որակյալ սերմացու ունենալ, ո՛չ պարարտանյութ ներկրել կամ արտադրել, ցորենի գներն էլ գնալով կրճատվում էին. ներկրումը դառնում էր մեկի մենաշնորհը:

Սկզբում հարազատներով միասին էին մշակում հողը. հետո մեկի տղան գնաց Ռուսաստան, մեկն իր տրակտորը քանդեց, մեկն էլ չուզեց մնացածից ավելի շատ աշխատել: Մարդիկ էլ հեռացան իրարից, ու հողակտորներն ավելի փոքրացան: Խեղճացավ գյուղացին: Չորս-հինգ տարի էլ չէր անցել, կամաց- կամաց սկսեց թողնել հողը ու բռնել պանդխտության ճանապարհը: Այս կերպ հողն էլ չէր սնում մարդուն:

### **Ներդիր. հացահատիկի արտադրության խնդիրները**

- ռեսուրսների գները (վառելանյութ, սերմացու, գյուղատնտեսական ծառայություններ, պարարտանյութ) գնալով թանկանում են, քանի որ դրանց շուկաները հիմնականում մենաշնորհային են, իսկ ցորենի գինը կայուն է: Արդյունքում գյուղացու ծախսերը գնալով աճում են, իսկ եկամուտը կայուն է:
- Սերմացուն երկար տարիներ չէր թարմացվում: Միայն վերջին մի քանի տարում ցորենի սերմնաբուծության զարգացման ծրագրով Հայաստան ներկրվեցին բարձակարգ ցորենի և գարու սերմեր:
- Պարարտանյութն հիմնականում մեկ տեսակի է՝ ազոտական: Իհարկե, կառավարությունն իրականացնում է դրա գնի սուբսիդավորման ծրագիր, սակայն դեռևս հողերի վերլուծություն չի իրականացվում, որը հնարավորություն կտա որոշելու, թե որ տեսակի պարարտանյութն է անհրաժեշտ հողին:
- Վերջին մի քանի տարում կառավարությունը սկսել է վառելանյութի գնի սուբսիդավորման ծրագիր, սակայն դա մնում է դեռևս բարձր, և գյուղացին էլ կանխավճարային տարբերակով հաճախ դժվարանում է վճարել ամբողջ տարվա վառելիքի գինը:
- Գյուղտեխնիկան հնացել է: Դա ազդում է և՛ վարի, և՛ հավաքման վրա: Հին կոմբայնները բերքի մինչև 30%-ը թողնում են հողում, որը հաջորդ տարվա ցանքը նույնպես անարդյունավետ է դարձնում:

Մոտ տասնհինգ տարի չմշակվեց հողը: Գյուղին հարող տարածքում մոտ հազար հեկտար վարելահող դարձավ խոտհարք: Հազար հեկտար, որը պատկանում էր ամբողջ գյուղին, ամեն տանը՝ փոքր կտոր:

Ու կարծես թե բոլորն էլ համակերպվել էին իրենց վիճակի հետ: Մեկը անասուն էր պահում, մյուսը ձկնորս էր, երրորդը արտագնա աշխատանքի էր մեկնում . . .

Բայց գյուղի ոգին անհանգիստ էր: Հողն անմշակ էր՝ առանց մշակելու և առանց մշակի:

Երկու տարի առաջ գյուղի երիտասարդները որոշեցին փոխել գյուղի կյանքը: Համայնքին երիտասարդ առաջնորդ ընտրեցին: Հիմա իրենք են կազմակերպում համայնքի կյանքը՝ վաղվա օրվա պատասխանատվությամբ ու նոր համայնք կառուցելու մղումով:

Երկու տարի առաջ իր սեփական ներդրմամբ համայնքի երիտասարդ ղեկավարը վարեց 150 հեկտար արդեն խոպան դարձած հողակտոր: Գյուղացիների հողն էր, արդեն խոպան դարձած: Գյուղի ժողովրդի մի մասը չէր հավատում, որ կստացվի, որ իրենք բերք կունենան: Իսկ գյուղապետի նպատակը մեկն էր՝ աշնանն արդեն մշակված հողի բերքը գյուղացուն տալ, հետո գանձել մշակման գումարը՝ ինքնարժեքով: Այս մեծ հողակտորը երկու հարյուր մարդու սեփականություն էր: Մի մասը խրախուսում էին արարքը, մյուս մասը՝ բացահայտ կամ ծածուկ քննադատում: Եղան նաև այնպիսիք, ովքեր գտնում էին, որ ավելի լավ կլիներ այդ հողից ուղղակի խոտ քաղել ու գյուղապետից պահանջում էին իրենց խոտի գումարը:

Բայց աշնանը հողն առատ բերք պարգևեց: Գարին հասել էր: Ամեն մեկը ստացավ իր բաժին հողի բերքը: Մեկ հեկտարի մշակման վրա կրկնակի վարով, սերմով, ցանքով ու հավաքելով ծախսվեց 110.000 դրամ: Միջին բերքը մեկ հեկտարից 2- 3 տոննա էր, եկամուտը՝ մոտ 250.000 դրամ: Երկար տարիների ընդմիջումից հետո գյուղացին հողից շահ ունեցավ:

Հաջորդ տարին արդեն մշակված 150 հեկտար հողում ցորեն ցանեցին: Ու էլի վարեցին նոր 150 հեկտար հողակտոր, գարի ցանեցին: Հիմա մշակվում է 300 հեկտար:

Ցորենի բերքն էլ լավն էր: Հեկտարից մոտ 3-4 տոննա բերք ստացան: Գյուղացին գոհ է. նման բերք սովետական շրջանում էլ հազվադեպ էին ստանում:



Առաջիկա երկու տարում մշակվող վարելահողը կդառնա 600 հեկտար: Հիմա բոլորը հավատում են ու վստահում: Գարնանը գյուղապետը վճարում է հողի մշակման համար, աշնանը գյուղացին փոխհատուցում է ծախսերը և ստանում բերքը: Բնությունն էլ պարզում է արդար ու առատ բերք: Արդար գործին՝ առատ հատուցում:

Հարևան գյուղերն էլ աչք են տալիս ու ոգևորվում: Լավ օրինակն էլ վարակիչ է:

Սեմյոնովկայում այժմ հողը չի մշակվում: Վարելահողերը գրեթե 25 տարի չեն մշակվել և վերածվել են խոտհարքերի ու արոտների:

Թե՛ հարևան Ծովագյուղի փորձը, թե՛ հողագործության զարգացման անհրաժեշտությունը (հացահատիկ, բազմամյա խոտաբույսեր, արևասեր բույսեր) համայնքի բնակչությանը ստիպում են մտածելու այս ուղղությամբ: Գյուղն ունի բավարար քանակությամբ գյուղտեխնիկա հողի մշակման համար և հիմնական խնդիրը որակյալ սերմերի ձեռքբերման դժվարությունն է, որը կապված է որակյալ սերմերի մատակարարների հետ կապված տեղեկության պակասի, ինչպես նաև ֆինանսների բացակայության հետ:

## **Նախաձեռնություններ հողագործության ոլորտում**

### **1. Ալրաղացի հիմնման աջակցություն**

Ծովագյուղ համայնքում ծրագրավորվող 600 հեկտար հացահատիկի աճեցումը, ինչպես նաև առաջիկայում Սեմյոնովկայում հնարավոր հացահատիկի աճեցման ավանդույթի վերականգնումը 2 համայնքներում կստեղծի 1000 տարեկան տոննայից ավելի ցորենի աղացման պահանջ:

### **2. Հացահատիկի, արևասեր մշակաբույսերի որակյալ սերմերի ձեռքբերման աջակցություն**

Հողագործության զարգացումը սերտորեն կապված է ցանվող մշակաբույսերի որակյալ սերմերի հետ: Համայնքներին անհրաժեշտ են ինչպես հացահատիկի, այնպես էլ արևասեր մշակաբույսերի որակյալ սերմեր, որոնց մշակումը համայնքներում կարող է բարձր արդյունավետություն ապահովել (կտավատ, ոլոռ, լոբի և այլն):

## Բ. Ծովամթերքի ճանապարհամերձ առևտուր

Պայմանավորված Երևան-Սևան-Դիլիջան-Թբիլիսի գլխավոր մայրուղու հարևանությամբ գտնվելու և Սևանա լճի առկայության գործոններով՝ Ծովագյուղում զարգանում է նաև ծովամթերքների ճանապարհամերձ առևտուրը:

Ճանապարհամերձ հատվածում տեղակայված են մոտ 8 վաճառակետ, որոնցից 5-ը՝ մաշված, անշուք տնակային պայմաններում, իսկ 3-ը՝ նորակառույց քարե շինություններում: Հիմնականում վաճառում են թառափ, իշխան, կարաս, սիգ ձկնատեսակներ և խեցգետին: Ձկնաբուծությունը տեղում զարգացած չէ: Խեցգետինն ու կարասը մթերում են գյուղի և ավամերձ այլ համայնքների ձկնորսներից, իսկ իշխանն ու թառափը՝ Մասիս քաղաքում ձկնաբուծությամբ զբաղվող կետերից: Սիգ տեսակը ամռանը հիմնականում ձեռք է բերվում սառեցված վիճակում:

Ծովամթերքների ձեռքբերման և վաճառքի գները.


	Ձեռքբերում (դրամ)	Վաճառք
Իշխան	1800	2200
Թառափ	2400	3000
Խեցգետին		
Մանր (20-35գր.)	200	500-600
Միջին (35-55գր.)	1200	1500-2000
Խոշոր (55 և բարձր)	2300-2400 (ձեռքբերման գները գուցե բուկլետում չներառենք)	3500-4000

Համայնքից մոտ 150 տնտեսություն եկամուտ է ստանում ձկնորսությամբ: Հիմնական որսը խեցգետինն է, ապա՝ փոքր քանակությամբ կարաս և բեղյու: Լճից օրական որսում են միջինը 4.5 տոննա խեցգետին: Պաշարի 50%-ը սպառվում է ներքին շուկայում, իսկ մյուս մասն էլ հանձնվում է արտահանող օղակներին: Օրական վաճառվում է 40-60 կգ խեցգետին և 30-50 կգ ձկնեղեն՝ յուրաքանչյուր վաճառակետից: Ձկնորսության սեզոնային առանձնահատկություններից կախված՝ տարբեր ժամանակահատվածներում տարբեր քանակի խեցգետին են որսում: Այն ժամանակ, երբ որսը քիչ է լինում, խեցգետնի մթերման գները բավական բարձրանում են, և

հակառակը՝ առատ որսի շրջանում գներն իջնում են: Այս դեպքերում ֆինանսապես օգտվում են այն տնտեսվարող օղակները, որոնք ունեն լողավազաններ և գների անկման հատվածում մթերում են խեցգետինը և վերավաճառում շահավետ պայմաններով: Սակայն Ծովագյուղում նման տնտեսություններ դեռևս չկան (բացառությամբ 1-2 փոքր և սկսնակ տնտեսվարողների, ովքեր ունեն 2 տոննա տարողությամբ լողավազաններ): Լողավազանների կառուցման միջոցով հնարավոր կլինի միջնորդների դերի նվազեցմամբ համայնքում ապահովել եկամուտների զգալի աճ:

Ծովամթերքների/ձկնորսության ոլորտում քիչ կարևոր չէ նաև սառնարանային տնտեսությունների դերը: Վերջին տարիներին շատ տարածված է և մեծ պահանջարկ ունի խեցգետնի պոչից կիսաֆաբրիկատների արտադրությունը: Ձմռան ամիսներին և խեցգետնի մաշկափոխության շրջանում խիստ նվազում են որսի և վաճառքի պաշարները, ինչի արդյունքում շուկայում տեղի է ունենում պահանջարկի աճ և գների բարձրացում: Համայնքում գործող 2 փոքր տնտեսություններն արդեն ունեն սառնարանում (500կգ տարողությամբ) կիսաֆաբրիկատների պահպանման մեկամսյա փորձ, և, ելնելով դրական արդյունքներից, պատրաստվում են ընդլայնել սառնարանների գործունեությունը:

# Խեցգետնի սպառումը Շովազյուղում



## Գ. Ռեստորանային բիզնես և տուրիզմ

Ափամերձ հատվածում գործում են մոտ 13 ռեստորանային և հյուրանոցային օբյեկտներ: Մոտ հարյուր հոգի համայնքից ներգրավված են այս ոլորտում: Ռեստորանների սննդակարգում իրենց մշտական տեղն են զբաղեցնում գյուղում արտադրված (տնական) սննդամթերքները՝ միս, պանիր, մածուն, թան, կարագ, կաթ, թռչնամիս, ձու և այլն: Սննդի կետերից յուրաքանչյուրը տարեկան կտրվածքով գյուղից ձեռք են բերում միջինը 1-2 տոննա սննդամթերք (ամեն մի տեսակից): Սակայն համայնքում կազմակերպված արտադրություն չի իրականացվում: Կաթի վերամշակումը տեղի է ունենում տնային պայմաններում, որակի ու քանակի տարբեր ստանդարտներով և ոչ կանոնավոր:

Հանգստի գոտիներում օգտագործման համար շատ պահանջված են նաև տարատեսակ մուրաբաները: Որոշ կազմակերպություններ իրենք են արտադրում մուրաբաները՝ մթերելով մրգերը տարբեր մարզերից, մնացածն էլ ձեռք են բերում պատրաստի մուրաբաներ արտադրող ընկերությունից:

Ծովագյուղի խաչմերուկում գործում է սուպերմարկետ, որտեղ քիչ քանակությամբ վաճառվում են գյուղում արտադրված բարիքները: Միայն այս սուպերմարկետում առկա է տնական ձվի (օրական՝ 300 հատ), թռչնամիս, պանրի և կաթնամթերքի հսկայական պահանջարկ: Ստանդարտացված արտադրության դեպքում սուպերմարկետը պահանջարկի մեծ մասը պատրաստ է բավարարել գյուղում արտադրված սննդամթերքով:

## Նախաձեռնություններ

- ⇒ Խեցգետնի լողավազանների հիմնում՝ մթերման համար:
- ⇒ Ճանապարհամերձ վաճառակետերի բարելավում, միասնական շուկայի հիմնում:
- ⇒ Սառնարանային տնտեսությունների հիմնում՝ ծովամթերքի ուղղությամբ:
- ⇒ Թռչնաբուծության զարգացում՝ ձվի և տնական թռչնամիս արտադրություն:
- ⇒ Ռեստորաններում եռալեզու մենյուների կիրառում:
- ⇒ Կաթնամթերքի արտադրություն:

## Դ. Անասնապահություն

Մեկնոնովկա համայնքում անասնապահությունը բնակչության մեծ մասի եկամտի միակ աղբյուրն է: 67 տնային տնտեսություններ ունեն 717 խոշոր եղջերավոր անասուններ:

Ծովագյուղում ևս անասնապահությունը տնտեսության գերակա ճյուղերից է: Բնակչության 50 %-ը զբաղվում է անասնապահությամբ: Այս համայնքում կա 3510 գլուխ խոշոր եղջերավոր անասուն:

Ստորև ներկայացվում է անասունների բաշխվածությունն՝ ըստ անասնապահական տնտեսության մեծության:

Ֆերմերներ (Խոշոր եղջերավոր անասնապահություն)	Քանակ / հոգի
Խոշոր (25 և ավելի գլուխ)	21
Միջին (10 -25 գլուխ )	155
Փոքր (մինչև 10 գլուխ)	584

10 և ավելի գլուխ անասուն ունեցող ֆերմերները անասունները պահում են հեռագնայում, որտեղ մասամբ հասանելի են ջուրը և էլեկտրաէներգիան: Ծովագյուղի հեռագնա արոտներում անհրաժեշտություն կա լրացուցիչ ջրարբիացման, որից մոտ 450 անասուն կարող են ջուր խմել: 10-ից քիչ գլուխ ունեցող տնտեսությունները անասուններին հիմնականում պահում են գոմերում՝ զարնան կեսերից մինչև աշնան կեսերը անասուններին նախրով տեղափոխելով արոտավայրեր և հակառակը:

Հիմնական տեսակը կովկասյան գորշն է, որն ունի միջինը 1800 լիտր կաթնատվություն: Պատմում են, որ այս տեսակի կովերը ունեցել են միջինը 2800 լիտր կաթնատվություն: Կաթնատվության անկումը բացատրվում է հիմնականում լրացուցիչ կերերով անասունների չկերակրելով, որի դեպքում հնարավոր չէ ապահովել անհրաժեշտ կերամիավոր լիակթման համար<sup>1</sup>:

Ստորև ներկայացված է կերամիավորների պարունակությունը՝ ըստ հաճախ օգտագործվող կերակրատեսակների.

<sup>1</sup> Լիակթման համար անհրաժեշտ է ապահովել օրական մոտ 10 կերամիավոր, այն դեպքում, երբ ձմռանը փաստացի ապահովվում է մինչև 5 կերամիավոր կեր:

Տեսակ	1 կգ-ի հաշվարկով կերամիավորը
Խոտ՝ առվույտի	0,52
Ծղոտ՝ գարու	0,36
Քուսպ՝ արևածաղկի	1,1
Եզիպտացորեն	1,1
Թեփ՝ ցորենի	0,7
Թեփ՝ գարու	0,7
Կարտոֆիլ	0,3

Մեկ կովի հաշվով 10 կերամիավոր ապահովելու համար ֆերմերը պետք է կատարի օրական 450 դրամի ծախս (եթե ֆերմերն ինքն է զբաղվում հողագործությամբ) կամ 900 դրամի ծախս, եթե ձեռք է բերում շուկայից:

Հողագործության աստիճանական զարգացումը և մշակվող տարածքների ավելացումը մասամբ կլուծեն այս հարցը. ֆերմերները կկարողանան գյուղում արտադրել անհրաժեշտ լրացուցիչ կերի մի մասը, ինչը թույլ կտա բարձրաձևելու կաթնատվությունը:

Համայնքներում այս պահին առկա է նաև անասնախոտի ձեռքբերման հետ կապված խնդիր: Եղանակային պայմանները այս տարի բարենպաստ չէին անասնախոտի համար, ինչի ընթացքում մեծ թվով ֆերմերներ չեն կարողացել հավաքել անհրաժեշտ քանակությամբ անասնախոտ՝ ձմռանը անասուններին կերակրելու համար:

Գեղարքունիքի  
առևտրաարդյունաբերական  
պալատը 5 ֆերմերի  
տրամադրել է փոխատվություն՝  
400 000 ալան դրամ,  
անասնախոտի ձեռք բերման  
համար:

Ֆերմերների հետ հարցազրույցները ցույց տվեցին, որ նրանք պատրաստ են ստանալու արհեստական սերմնավորմամբ կաթնատու տոհմային սորտեր: Արհեստական սերմնավորումը այս պահին համայնքներում հասանելի չէ:

Շվից, Հոլշտեյն և Ջերսի տեսակները հնարավոր է ստանալ արհեստական սերմնավորման եղանակով՝ առանց ծնելիության հետ կապված խնդիրների:

Այս երեք տեսակների կաթնատվությունը հետևյալն է՝

- Շվից, Հոլշտեյն - 6000 - 8000 լիտր (յուղի պարունակությունը՝ 3.5)
- Ջերսի - 4 000 լիտր (յուղի պարունակությունը՝ 6.0)

4 սերնդափոխություն է անհրաժեշտ հիմնական տոհմին շատ մոտ տեսակ ստանալու համար, որոնց կաթնատվության աճը ներկայացված է ստորև:

Սերունդ	Անվանում	Մաքսիմալ կաթնատվություն	Թույլատրվում է հեռագնա արտավայր տանել
Առաջին	F1	3000	Այո
Երկրորդ	F2	4000	Այո
Երրորդ	F3	5000	Ոչ
Չորրորդ	F4	60000 - 8000	Ոչ

### Կաթի իրացում

Արտադրված կաթի հիմնական մասը՝ մոտ 70 %, մթերվում է կաթնամթերքի մեծ արտադրողների կողմից 130-170 դրամով՝ կախված սեզոնից: Մնացած մասը օգտագործվում է տնտեսության ներսում կամ արտադրվում է պանիր՝ հիմնականում վաճառվելով ծանոթ-բարեկամների միջոցով՝ 1 կգ-ը միջինը 1300 դրամով: Շատ քիչ թվով տնտեսություններ են պատրաստում պանիր և վաճառում Երևանում կոնկրետ գնորդի՝ 1700-1800 դրամով: Սովետական միության տարիներին Սեմյոնովկայում գործել է պանրի արտադրության մեծ գործարան, որն արդեն 20 տարի է, ինչ չի աշխատում:


Կաթի արտադրության հետ կապված շահութաբերության հաշվարկը ներկայացված է ստորև.

#### *Աղյուսակ 3. Կաթի արտադրության շահութաբերության հաշվարկը 10 կովի դեպքում:*

1	Ստացվող կաթ	1 500 լիտր x 10 = 15 000 լիտր
1.1	Կաթի վաճառքից՝ եկամուտ	15 000 x 150 = 2 250 000 դրամ
2	Հորթ	8 հատ
2.1	Հորթի վաճառք	40 000 դրամ x 8 = 320 000 դրամ
3	Ընդամենը՝ եկամուտ (1 + 2)	= 2 570 000 դրամ
4	Ծախսեր	= 880 000 դրամ
5	Շահույթ	= 1 690 000 դրամ



Կաթի իրացման արժեքային շղթան պատկերավոր ներկայացված է ներքևի գծապատկերում:



## Մսի իրացումը

Տարածաշրջանում տարեկան արտադրվում է 200 տոննա տավարի միս: Միսը հիմնականում վաճառվում է մսավաճառների միջոցով, ովքեր միսը վաճառում են Սևան քաղաքում, Գեղարքունիքի մարզում և Երևանում: Մսի մթերման գները հետևյալն են՝

Տավար	գնման գին 1կգ/ դրամ
Ցուլ	1900 – 2000
Կով	1400 – 1500
Ոչ առողջ և տարեց կենդանի	1000 – 1200

Ստորև աղյուսակում ներկայացված է մսի արտադրության ծախսերի և եկամտի համեմատական հաշվարկը:

**Աղյուսակ 4. Մսի արտադրության ծախսերի և եկամտի հաշվարկ (տավար, ոչխար, խոզ)**

1	Անվանումը	Բովոյ հորթեր
2	Օպտիմալ տնտեսություն	20 հորթ
3	Ստացվող արդյունքը՝ միավորից	200 կգ միս երկու տարում
4	Ընդհանուր արդյունքը	4000 կգ միս
5	Մեկ միավորի մեծածախ գինը	2000 դրամ մեկ կիլոգրամ միսը
6	ստացվող եկամուտը ('4'x'5')	8 000 000
7	անհրաժեշտ ծախսերը	3 300 000
8	Շահույթ	4 700 000 - 2 տարվա համար 2 350 000

Տավարի մսի արտադրությունը տարածաշրջանում արդյունավետ է, եթե տնտեսությունը ավելի քան 10 գլուխ ցուլիկ է բուծում:

**Նախաձեռնություններ անասնապահության արժեզրոյում**

**Արոտների ջրաբքիացում Շովազյուղի հեռագնա արոտավայրերում:**

- չնայած մասնակի ջրաբքիացմանը՝ ջրի պակասը բավականին լուրջ խնդիր է հեռագնա արոտավայրերում: Մոտ 2 կմ ջրագիծը և 2 խմոցները թույլ կտան մոտ 450 անասունի խմելու ջուր ունենալու:

**Արհեստական սերմնավորման եղանակով կովերի տոհմերի բարելավում:**

- Ֆերմերները պատրաստ են սորտերի բարելավման ուղղությամբ քայլեր կատարելու: Այս պահին գյուղերում արհեստական սերմնավորումը հասանելի չէ:

**Կարճաժամկետ մատչելի ֆինանսավորման հնարավորության ստեղծում՝ գյուղատնտեսության մեջ ընթացիկ ծախսերը հոգալու համար:**

- Գյուղատնտեսության մեջ բացի երկարաժամկետ մատչելի ֆինանսական ներդրումների անհրաժեշտությունից (անասնագոմի վերանորոգում, անասունների ձեռքբերում, գյուղտեխնիկայի գնում, այգիների հիմնում և այլն), հաճախ առաջանում են կարճաժամկետ ծախսերի ֆինանսավորման անհրաժեշտություն, որոնք գյուղացին հնարավորություն չունի իրականացնելու: Այդպիսի ծախսերից են անասնախոտի հավաքման կամ գնման, լրացուցիչ կերի գնման, սերմացուների ձեռքբերման, հողի մշակման հետ կապված և նմանատիպ այլ ծախսեր:
- Գեղարքունիքի առևտրաարդյունաբերական պալատը արդեն ֆինանսավորել է 5 ֆերմերի՝ անասնախոտի ձեռքբերման համար: Այս հնարավորությունը պետք է ստեղծվի բոլոր գյուղերում և ավելի մեծ քանակությամբ մարդկանց ֆինանսավորելու համար:

**Բազմամյա խոտաբույսերի և այլ մշակաբույսերի աճեցման աջակցություն, որոնք կարող են օգտագործվել որպես լրացուցիչ կերեր անասունների համար:**

- Զարգացող հողագործությունը սկսել է ստեղծել պայմաններ, որ բացի հացահատիկից, աճեցնեն նաև այլ մշակաբույսեր: Համայնքների բնակլիմայական պայմանները և արևային օրերի մեծ քանակը հաշվի առնելով՝ հնարավոր է գտնել մշակաբույսեր, որոնց աճեցումը կարող է ունենալ բարձր եկամտաբերություն և բերքատվություն:

**Պանրի և մսամթերքի արտադրության փոքր արտադրամասերի հիմնման աջակցություն.**

- համայնքներում արտադրվող կաթի մոտ 70 % -ը մթերվում է կաթնամթերքի խոշոր արտադրողների կողմից: Համայնքների ներսում կաթնամթերքի և մսամթերքի արտադրության փոքր արտադրամասերի հիմնումը թույլ կտա խթանելու տնտեսության զարգացումը համայնքների ներսում, ստեղծելու աշխատատեղեր, ինչպես նաև նվազեցնելու կախվածությունը մսի և կաթի արտաքին մթերողներից:

**Կաթի հավաքման կետի և սառնարանի հիմնման աջակցություն.**

- հավաքման կետը թույլ կտա առավել արդյունավետ դարձնելու կաթի մթերման գործընթացը՝ ստեղծելով պայմաններ կաթի որակի պահպանման համար, ինչպես նաև հետագայում կարող է ծառայել որպես մատակարար՝ համայնքների ներսում կաթնամթերքի արտադրամասերի համար:

---

## Կանանց ներգրավվածությունը արժեզրթաներում

---

Համայնքներում կանայք հիմնականում ներգրավված են անասնապահության ոլորտում՝ անասունների կերակրման, գոմերի մաքրման և կթման գործընթացներում: Այս ոլորտում ներգրավված են մոտ 120 կանայք: Տնային տնտեսություններում կանայք նաև ակտիվորեն ներգրավված են տնային պայմաններում կաթնամթերքի, հիմնականում՝ պանրի արտադրության մեջ:

Մոտ 30 կին ներգրավված են հողագործության մեջ՝ բերքի հավաքման և սորտավորման գործընթացում: Խոսքը չի վերաբերում տնամերձ հողամասերում բանջարեղենի և մրգի արտադրությանը, որտեղ հիմնականում ներգրավված են կանայք:

Խեցգետնի արտադրության մեջ ներգրավված են 45 կանայք, ովքեր տեսակավորում են խեցգետինը՝ ըստ չափսերի, ինչպես նաև մաքրում խեցգետնի պոչերը:

Ռեստորանային և հյուրանոցային բիզնեսներում ներգրավված են 89 կանայք՝ հիմնականում որպես սպասարկող անձնակազմ (մատուցողուհիներ, հավաքարարներ և խոհարարներ):

Շնորհակալություն ենք հայտնում Ծովագյուղ և Սեմյոնովկա համայնքների  
գյուղապետարաններին՝ հանձինս գյուղապետերի և տեղական թիմի անդամների՝  
ծրագրի իրականացմանն աջակցելու համար:

